ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 օգոստոսի 2024 թվականի N 1261-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1825-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 1825-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) գործերի կառավարչությունից առանձնացման եղանակով ստեղծվում է կազմակերպավերլուծական բաժինը.».

2) 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4) նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունից առանձնացման եղանակով ստեղծվում են զինվորական ներկայացուցչությունների բաժինը, բաժնեմասերի կառավարման բաժինը և մաքսային ձևակերպումների բաժինը.».

3) 7-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե» և «զ» պարբերություններով՝

«ե. սպառազինության և տեխնիկական ապահովման վարչությունը,

զ. թիկունքային ապահովման վարչությունը.».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-10-րդ ենթակետերով՝

«8) նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը միանում է զնումների կազմակերպման վարչությանը.

9) բաժնեմասերի կառավարման բաժինը միանում է գործերի կառավարչությանը.

10) մաքսային ձևակերպումների բաժինը միանում է կենտրոնացված փոխադրումների ապահովման (լոգիստիկ) վարչությանը։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետի։ Սույն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետն ուժի մեջ է մտնում որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված կառուցվածքային փոփոխության հետևանքով քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում առաջացած պաշտոնները սահմանված կարգով զբաղեցվելու օրվան հաջորդող օրվանից։

3. Սահմանել, որ սույն որոշման համաձայն զինվորական ներկայացուցչությունների բաժնի, սպառազինության և տեխնիկական ապահովման վարչության, թիկունքային ապահովման վարչության կառուցվածքային փոփոխությունների

գործողությունը տարածվում է այդ ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատման օրվանից հետո ծագած հարաբերությունների վրա։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

09.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ